ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի հոկտեմբերի 7-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով բարձրացնել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գործունեության արդյունավետությունը,

գիտակցելով Կազմակերպության մշտապես գործող աշխատանքային մարմինների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովման կարևորությունը,

հաշվի առնելով «Դիվանագիտական կապերի մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիան,

հիմնվելով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության՝ 2002 թվականի հոկտեմբերի 7-ի կանոնադրության վրա,

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի հոկտեմբերի 7-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 49-րդ հոդվածին համապատասխան,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. 1-ին հոդվածում՝

ա) յոթերորդ և ութերորդ պարբերությունները համապատասխանաբար շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«անդամ պետությունների ներկայացուցիչներ»՝ Կազմակերպության շրջանակներում անցկացվող միջոցառումներին մասնակցող՝ Կազմակերպության անդամ պետությունների ներկայացուցիչներ՝ ներառյալ պատվիրակությունների ղեկավարներն ու անդամները, բացառությամբ Կազմակերպությանն առընթեր անդամ պետությունների մշտական և լիազոր ներկայացուցիչների,

Կազմակերպությանն առընթեր մշտական և լիազոր ներկայացուցիչ (այսուհետ՝ Մշտական ներկայացուցիչ)՝ Կազմակերպության անդամ պետության կողմից իր ազգային օրենսդրության համապատասխան նշանակվող ներկայացուցիչ, որն ուղարկող պետության կողմից օժտվում է լիազորություններով՝ Կազմակերպության հարցերով գործունեության և Կազմակերպության կանոնադրության IV գլխին համապատասխան հիմնադրված Մշտական խորհրդում աշխատանքի համար.».

բ) ավելացնել հետևյալ բովանդակությամբ տասնութերորդ պարբերություն.

«Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Կազմակերպության բարձրագույն վարչական պաշտոնատար անձի տեղակալ, պաշտոնատար անձ՝ Քարտուղարությունում այն պաշտոնների՝ յուրաքանչյուր անդամ պետության համար ամրագրված քվոտաներին համապատասխան սահմանված կարգով հաստատվող անձանց թվից, որոնց ցանկը սահմանում է Խորհուրդը.».

գ) տասնութից քսանմեկերորդ պարբերությունները համարել, համապատասխանաբար, տասնիններից քսաներկուերորդ պարբերություններ.

դ) «Լիազոր ներկայացուցիչ» բառերը փոխարինել «Մշտական ներկայացուցիչ» բառերով՝ համապատասխան թվով և հոլովով.

1.2. 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11

Եթե Գլխավոր քարտուղարը, Գլխավոր քարտուղարի տեղակալները, նրանց ընտանիքների՝ իրենց հետ ապրող անդամները գտնվելու վայրի պետության քաղաքացիներ չեն, արտոնություններից և անձեռնմխելիություններից օգտվում են այնքան, որքան «Դիվանագիտական կապերի մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայով նախատեսված է դիվանագիտական գործակալի և նրա ընտանիքի անդամների համար:».

1.3. 21^1 հոդվածը «Կազմակերպության աշխատակիցների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածում նշվածների)» բառերով.

1.4. 23-րդ, 24-րդ, 27-33-րդ հոդվածներում «Լիազոր ներկայացուցիչ» բառերը փոխարինել «Մշտական ներկայացուցիչ» բառերով՝ համապատասխան թվով և հոլովով:

2. Սույն Արձանագրության կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

3. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի 46-րդ հոդվածով նախատեսված կարգով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է հայտարարել սույն Արձանագրության ժամանակավոր կիրառման մասին՝ այդ մասին գրավոր ծանուցելով ավանդապահին:

Կատարված է Աստանա քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 8-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որը սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Բելառուսի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Ռուսաստանի Դաշնության կողմից՝

[ստորագրություն]

Ղազախստանի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Տաջիկստանի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. նոյեմբերի 8-ին ստորագրված «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն